			- Արտագերատեսչական ծախսեր (4217)	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
			- Ներքին գործուղումներ (4221)	50,0	50,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
			- Վարչական ծառայություններ (4231)	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
			- Համակարգչային ծառայություններ (4232)	120,0	120,0	0,0	120,0	120,0	0,0	120,0	120,0	0	0
			Աշխատակազմի տեղեկատվական ծառայություններ 4234	413,0	413,0	0,0	556,0	556,0	0,0	556,0	556,0	0	0
			- Կառավարչական ծառայություններ (4235)	400,0	400,0	0,0	400,0	400,0	0,0	400,0	400,0	0,0	0,0
			- Ներկայացուցչական ծախսեր (4237)	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
			- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ (4239)	350,0	350,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
			- Մասնագիտական ծառայություններ (4241)	50,0	50,0	0,0	23,0	23,0	0,0	13,3	13,3	0	0
			- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում (4251)	150,0	150,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
			- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում (4252)	1050,0	1050,0	0,0	950,0	950,0	0,0	948,8	948,8	0	0
			- Գրասենյակային նյութեր և հագուստ (4261)	1200,0	1200,0	0,0	1200,0	1200,0	0,0	1199,3	1199,3	0	0

				- Վերապատրաստման և ուսուցման նյութեր (աշխատողների վերապատրաստում) (4263)	75,0	75,0	0,0	60,0	60,0	0,0	60,0	60,0	0.0
				- Տրանսպորտային նյութեր (4264)	2000,0	2000,0	0,0	1970,0	1970,0	0,0	1968,1	1968,1	0
				- Կենցաղային և հանրային սննդի նյութեր (4267)	600,0	600,0	0,0	600,0	600,0	0,0	600,0	600,0	0.0
				- Հատուկ նպատակային այլ նյութեր (4269)	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0.0	0.0	0.0
				- Պարտադիր վճարներ (4823)	40,0	40,0	0,0	40,0	40,0	0,0	34,7	34,7	0
				- Վարչական սարքավորումներ (5122)	900,0	0,0	900,0	1009,0	0,0	1009,0	1006,9	0.0	1006,9
				Սպասարկման նպատակով պահվող պաշարներ	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
2122	1	2	2	Միջազգային	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0.0	0.0	0.0
2130	1	3	0	Ընդհանուր բնույթի ծառայություններ, որից՝	1140,8	1140,8	0,0	640,8	640,8	0,0	640,8	640,8	0
2133	1	3	3	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	1140,8	1140,8	0,0	640,8	640,8	0,0	640,8	640,8	0
				- Վարչական ծառայություններ (4231)	500,0	500,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
				- Համակարգչային ծառայություններ (4232)	100,8	100,8	0,0	100,8	100,8	0,0	100,8	100,8	0.0
				- Կառավարչական ծառայություններ (4235)	540,0	540,0	0,0	540,4	540,0	0,0	540,0	540,0	0
2140	1	4	0	Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք, որից՝	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0.0	0.0	0.0

[illegible]

2400	4	0	0	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 2410 + տող 2420 + տող 2430 + տող 2440 + տող 2450+տող 2460 + տող 2470 + տող 2480 + տող 2490), այդ թվում՝	970,0	970,0	0,0	-803,0	1341,0	-2144,0	-1399,2	1341,0	-2740,2
2421	4	2	1	Գյուղատնտեսություն	0,0	0,0	0,0	965,0	0,0	965,0	0	0	0
				Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում(5113)	0,0	0,0	0,0	965,0	0,0	965,0	0	0	0
2422	4	2	2	Անտառային տնտեսություն	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0.0	0.0	0.0
2423	4	2	3	Ձկնորսություն և որսորդություն	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0.0	0.0	0.0
2424	4	2	4	Ոռոգում	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0.0	0.0	0.0
2430	4	3	0	Վառելիք և էներգետիկա, որից՝	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0.0	0.0	0.0
2431	4	3	1	Քարածուխ և այլ կարծր բնական վառելիք	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0.0	0.0	0.0

2432	4	3	2	Նավթամթերք և բնական գազ	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
2433	4	3	3	Միջուկային վառելիք	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
2434	4	3	4	Վառելիքի այլ տեսակներ	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
2435	4	3	5	Էլեկտրաէներգիա	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
2436	4	3	6	Ոչ էլեկտրական էներգիա	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
2440	4	4	0	Լեռնաարդյունահանում , արդյունաբերություն և	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
2441	4	4	1	Հանքային ռեսուրսների արդյունահանում, բացառությամբ բնական վառելիքի	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
2442	4	4	2	Արդյունաբերություն	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
2443	4	4	3	Շինարարություն	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
2450	4	5	0	Տրանսպորտ, որից՝	970,0	970,0	0,0	11232,0	1341,0	9891,0	10887,2	1341,0	9546,2	
2451	4	5	1	Ճանապարհային տրանսպորտ	970,0	970,0	0,0	11232,0	1341,0	9891,0	10887,2	1341,0	9546,2	
				Կոմունալ ծառայություններ4213	700,0	700,0	0,0	1071,0	1071,0	0,0	1071,0	1071,0	0	
				- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում (4251)	270,0	270,0	0,0	270,0	270,0	0,0	270,0	270,0	0	

				գույքի և սարքավորումների վարձակալություն 4216	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0.0
				Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում(5113)	0,0	0,0	0,0	9891,0	0,0	9891,0	9546,2	0	9546,2
				Նախագծահետազոտական ծախսեր /5134/	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
2490	4	9	0	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին պատկանող). որից՝	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
2491	4	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին պատկանող)	0,0	0,0	0,0	-13000,0	0,0	-13000,0	-12286,4	0	-12286,4
2500	5	0	0	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 2510 + տող 2520 + տող 2530 + տող 2540 + տող 2550 + տող 2560), այդ թվում՝	17740,0	17063,2	676,8	18727,9	18451,1	276,8	18445,7	18445,7	0
2510	5	1	0	Աղբահանում, որից՝(տող 2110 + տող 2120 + տող 2140 + տող 2150 + տող 2160 + տող 2170 + տող 2180) այդ թվում՝	1076,8	400,0	676,8	776,8	500,0	276,8	500,0	500,0	0
2511	5	1	1	Աղբահանում	1076,8	400,0	676,8	776,8	500,0	276,8	500,0	500,0	0
				- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ (4111)	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0.0
				Կոմունալ ծառայություններ (4213)	400,0	400,0	0,0	200,0	200,0	0,0	200,0	200,0	0.0

				- Կենցաղային և հանրային սննդի նյութեր (4267)	300,0	300,0	0,0	300,0	300,0	0,0	300,0	300,0	0.0
				Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում(5113)	276,8	0,0	276,8	276,8	0,0	276,8	0	0	0
				Նախագծահետազոտական ծախսեր /5134/	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
2530	5	3	0	Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար, որից՝	48,0	48,0	0,0	48,0	48,0	0,0	48,0	48,0	0.0
2531	5	3	1	Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար	48,0	48,0	0,0	48,0	48,0	0,0	48,0	48,0	0.0
				- Տրանսպորտային նյութեր (4264)	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0.0	0.0	0.0
				- Պարտադիր վճարներ (4823)	48,0	48,0	0,0	48,0	48,0	0,0	48,0	48,0	0.0
2540	5	4	0	Կենսաբազմազանության և բնության պաշտպանություն, որից՝	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0.0	0.0	0.0
2560	5	6	0	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող), որից՝	16615,2	16615,2	0,0	17903,1	17903,1	0,0	17897,7	17897,7	0
2561	5	6	1	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	16615,2	16615,2	0,0	17903,1	17903,1	0,0	17897,7	17897,7	0
				- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ (4111)	12480,1	12480,1	0	13142,1	13142,1	0	13141,7	13141,7	0

				- Պարզևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ (4112)	206,0	206,0	0	206,0	206,0	0	206,0	206,0	0
				- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում (4252)	800,0	800,0	0	1505,0	1505,0	0	1505,0	1505,0	0
				- Հնդիանուր բնույթի այլ ծառայություններ (4239)	329,1	329,1	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
				Տրանսպորտային նյութեր 4264	2800,0	2800,0	0,0	2850,0	2850,0	0,0	2845,0	2845,0	0
				- Կենցաղային և հանրային սննդի նյութեր (4267)	0,0	0,0	0,0	200,0	200,0	0,0	200,0	200,0	0
2600	6	0	0	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող 2610 + տող 2620 + տող 2630 + տող 2640 + տող 2650 + տող 2660), այլ թվում՝	3550,0	3550,0	0,0	4049,4	3214,4	835,0	4027,4	3192,4	835,0
				- Նախագծահետազոտական ծախսեր (5134)	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
2630	6	3	1	Զբամատակարարում, որից՝	450,0	450,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
2631	6	3	1	Զբամատակարարում	450,0	450,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
				Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251	450,0	450,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
2640	6	4	0	Փողոցների լուսավորում, որից՝	3100,0	3100,0	0,0	4049,4	3214,4	835,0	4027,4	3192,4	835,0
2641	6	4	1	Փողոցների լուսավորում	3100,0	3100,0	0,0	4049,4	3214,4	835,0	4027,4	3192,4	835,0

				- Էներգետիկ ծառայություններ (4212)	2200,0	2200,0	0,0	1900,0	1900,0	0,0	1877,9	1877,9	0
				Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251	250,0	250,0	0,0	664,4	664,4	0,0	664,4	664,4	0
				- Կենցաղային և հանրային սննդի նյութեր (4267)	650,0	650,0	0,0	650,0	650,0	0,0	650,0	650,0	0.0
				Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում(5113)	0,0	0,0	0,0	835,0	0,0	835,0	835,0	0	835,0
2700	7	0	0	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ (տող 2710 + տող 2720 + տող 2730 + տող 2740 + տող 2750 + տող 2760), այդ թվում՝	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
2710	7	1	0	Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ, որից՝	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
2711	7	1	1	Դեղագործական ապրանքներ	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
2712	7	1	2	Այլ բժշկական ապրանքներ	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
2713	7	1	3	Բժշկական սարքեր և սարքավորումներ	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
2762	7	6	2	Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
2800	8	0	0	ՀԱՆԳԻՍ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող 2810 + տող 2820 + տող 2830 + տող 2840+ տող 2850 + տող 2860), այդ թվում՝	12232,5	12232,5	0,0	14158,1	14158,1	0,0	14137,8	14137,8	

2810	8	1	0	Հանգստի և սպորտի ծառայություններ, որից՝	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
2811	8	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններ	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
2820	8	2	0	Մշակութային ծառայություններ, որից՝	11932,5	11932,5	0,0	14008,1	14008,1	0,0	13987,8	13987,8	0
2821	8	2	1	Գրադարաններ	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
2822	8	2	2	Թանգարաններ և զուգասրահներ	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
2823	8	2	3	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	8882,5	8882,5	0,0	10717,1	10717,1	0,0	10696,8	10696,8	0
				- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ (4111)	6571,5	6571,5	0,0	7280,5	7280,0	0,0	7280,2	7280,2	0
				Պարգևատրումներ դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ 4112	629,0	639,0	0,0	656,0	656,0	0,0	656,0	656,0	0
				- Էներգետիկ ծառայություններ (4212)	442,0	442,0	0,0	277,6	277,6	0,0	273,9	273,9	0
				Մասնագիտական ծառայություններ 4241	40,0	40,0	0,0	40,0	40,0	0,0	23,7	23,7	0
				Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում (4251)	500,0	500,0	0,0	780,0	780,0	0,0	780,0	780,0	0
				Գրասենյակային նյութեր և հագուստ (4261)	200,0	200,0	0	450,0	450,0	0	450,0	450,0	0
				Կենցաղային և հանրային սննդի նյութեր (4267)	200,0	200,0	0	200,0	200,0	0	200,0	200,0	0

				- Շենքերի և շինությունների կառուցում (5112)	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
				- Նախագծահետազոտական ծախսեր (5134)	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
2912	9	1	2	Տարրական ընդհանուր կրթություն 4729	800,0	800,0	0,0	800,0	800,0	0,0	800,0	800,0	0
2920	9	2	0	միջնակարգ ընդհանուր կրթություն 4729	900,0	900,0	0,0	1604,0	1604,0	0,0	1604,0	1604,0	0
2921	9	2	1	Հիմնական ընդհանուր կրթություն 4729	200,0	200,0	0,0	104,0	104,0	0,0	104,0	104,0	0
				Այլ նպաստներ բյուջեից 4729	200,0	200,0	0,0	104,0	104,0	0,0	104,0	104,0	0
2922	9	2	2	միջնակարգ ընդհանուր կրթություն	700,0	700,0	0	1500,0	1500,0	0	1500,0	1500,0	0
				- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին (4637)	0	0	0	1210,0	12010,0	0	1210,0	1210,0	0
				- Այլ նպաստներ բյուջեից (4729)	700,0	700,0	0	290,0	290,0	0	290,0	290,0	0
2930	9	3	0	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն, որից՝	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
2931	9	3	1	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
2932	9	3	2	Միջին մասնագիտական կրթություն	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
2940	9	4	0	Բարձրագույն կրթություն, որից՝	500,0	500,0	0,0	580,0	580,0	0,0	480,0	480,0	0

2941	9	4	1	Բարձրագույն մասնագիտական կրթություն 4729	500,0	500,0	0,0	580,0	580,0	0,0	480,0	480,0	0
2981	9	8	1	Կրթություն (այլ դասերին չպատկանող)	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
3000	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 3010 + տող 3020 +	5200,0	5200,0	0,0	7060,0	7060,0	0,0	7060,0	7060,0	0
3061				Բնակարանային ապահովում	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
3070	10	7	0	Մոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) , որից՝	5200,0	5200,0	0,0	7060,0	7060,0	0,0	7060,0	7060,0	0
3071	10	7	1	Մոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	5200,0	5200,0	0,0	7060,0	7060,0	0,0	7060,0	7060,0	0
3092	10	9	2	Մոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժադակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող 3110), այլ թվում՝	4790,0	4790,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
3110	11	1	0	ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ , որից՝	4790,0	4790,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
3112	11	1	1	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	4790,0	4790,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0
				- Պահուստային միջոցներ (վարչական բ.) (4891)	4790,0	4790,0	0,0	0,0	0,0	0,0	0	0	0

Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքապետարանի 2017թ-ի բյուջեի կատարման տարեկան
հաշվետվության աուդիտ
մարտ 2018թ.

Անկախ աուդիտորական եզրակացություն

Բալահովիտ գյուղական համայնքի ավագանուն

*Եզրակացություն բյուջեի կատարման տարեկան ֆինանսական հաշվետվությունների
աուդիտի վերաբերյալ*

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Բալահովիտ գյուղական համայնքի (այսուհետ՝ «Համայնք») կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2017թ դեկտեմբերի 31-ի դրությամբ բյուջեի կատարման եկամուտների և ծախսերի հաշվետվությունները և այլ ծանոթագրություններ:

Մեր կարծիքով, կից բյուջեի կատարման տարեկան ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում բյուջեի կատարման եկամուտների և ծախսերի մասին 2017թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական պատկերը՝ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության <<Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար>> բաժնում:

Մենք անկախ ենք համայնքապետարանից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքապետարանի 2017թ-ի բյուջեի կատարման տարեկան
հաշվետվության աուդիտ
մարտ 2018թ.

Առանցքային աուդիտորական հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք մեր մասնագիտական
դատողության համաձայն՝ առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի
ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են
ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն,
և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք
չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

Այլ տեղեկատվություն

Համաձայն 2014 թվականի հունիսի 21-ի թիվ 97-ն հրամանով հաստատված <<Հանրային
հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի
2018թվականից համայնքները անցնում են ՀՀ հանրային հատվածի հաշվապահական
հաշվառման ստանդարտի /725-ն-24.10.2014 /:

Այդ ստանդարտը պահանջում է որ 2018-ից կազմվեն ֆինանսական 5
հաշվետվություններ, ներառյալ հաշվեկշիռը:

Հաշվեկշռի կազմման համար ակտիվները և պարտավորությունները պետք է ներկայացվեն
իրական արժեքով, որից էլ բխում է ՀՀ Կառավարության կողմից 2016 թվականի մարտի 17-
ի թիվ 264-ն հրամանով հաստատված <<Հանրային հատվածի կազմակերպությունների
հիմնական միջոցների գույքագրման և վերագնահատման մասին>> որոշումը: Այն
պարտադրում է, որ գյուղական համայնքները մինչև 2018թվականի ապրիլի 1-ը
վերագնահատեն իրենց գույքը:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի
պահանջներին, ինչպես նաև համայնքների բյուջեի կազմման հրահանգին
համապատասխան տարեկան հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ
ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ
ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական
խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը
ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը
պատասխանատու է համայնքապետարանի անընդհատ գործելու կարողության
գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը
վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության

Կոտայքի մարզի Բալասիովիտ համայնքապետարանի 2017թ-ի բյուջեի կատարման տարեկան
հաշվետվության աուդիտ
մարտ 2018թ.

հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ
ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես
չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են համայնքի
ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի
համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական
հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական
խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման
հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի
երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ
կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են
առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ
խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն
ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական
հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:


12 մարտ, 2018թ.

Հարգանքով՝

Ա. Բաբայան

Տնօրեն

Բ. Երևան



Արևիկ Հարությունյան

պատասխանատու աուդիտոր

A handwritten signature in black ink, likely belonging to Aravik Harutyunyan.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՐՏԻ 2018թվականի N 14-Ն

**ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ
ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ
ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ
ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի պահանջով, համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Բալահովիտ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

2. ԽԱԶԱՏՐՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌՈՒԴԻԿ

4. ՄԱՐՏԻՐՈՅԱՆ ԱՇՈՏ

5. ՄՀՈՅԱՆ ՄԱԶԻԹ

6. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ

7. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ



ԿԱՄՈ ԳՐԻԳՈՐՅԱՆ



Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Բալախովիտ համայնքի
ավագանու 2018 թվականի
մարտի 12-ի N 14-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲԱԼԱԽՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է Բալախովիտ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները (այսուհետ՝ պարտադիր բարեկարգում):

2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Բալախովիտ համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:

4. Սույն կարգի գործողությունը տարածվում է Բալախովիտ համայնքի վարչական սահմաններում տեղակայված (գտնվող)՝

1) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

3) այգիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5) բացօթյա շուկաների և տոնավաճառների սեփականատերերի կամ տիրապետողների վրա:

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման, այդ թվում՝ լվացման, և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման, բարեկարգման (սալիկապատման կամ ասֆալտապատման) աշխատանքները և մաքրության պահպանումը.

2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի, բուսածածկերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը.

3) անհրաժեշտ լուսավորության ապահովումը՝ անշարժ գույքի մուտքի համար.

4) շենքերին ու շինություններին հարակից բակային տարածքների պարբերաբար մաքրումը և կանաչապատումը.

5) թեթև կոնստրուկցիաներով (մետաղյա խողովակ, ցանց, ճաղեր և այլն) ցանկապատումը և դրանց փոխումը, փոխարինումը.

6) համայնքային և միջհամայնքային նշանակության փողոցներում գտնվող առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտների տոնական զարդարումը՝ Ամանորի և Ծննդյան տոներին՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ից մինչև հաջորդ տարվա հունվարի 13-ը ներառյալ:

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը, փոխարինումը:

7. Շինարարության թույլտվություն պահանջող և չպահանջող բարեկարգման աշխատանքների ցանկը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմամբ:

8. Բարեկարգման աշխատանքների կազմակերպման համար անշարժ գույքի սեփականատերերի և տիրապետողների կողմից կարող են կատարվել տարածքների չափազրույթ, կազմվել անհրաժեշտ աշխատանքների ցանկ, իսկ վերականգնման, նորոգման, փոխարինման աշխատանքների դեպքում՝ թերությունների մասին արձանագրություն:

9. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ միայն կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում.

2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում.

3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գունային փոփոխություններ.

4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ.

5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

10. Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են Բալախովիտ համայնքի ղեկավարի կողմից համաձայնեցված ձևավորման նախագծին և (կամ) հատակագիծ-սխեմային համապատասխան: Նախագիծը անվճար մշակվում և տրվում է Բալախովիտի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության ոլորտը համակարգող մասնագետի կողմից:

11. Պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված շենքերի և կառույցների ճակատների վերակառուցումը և նորոգումն իրականացվում է հուշարձանների պահպանության պետական լիազոր մարմնի համաձայնությամբ: Ընդ որում՝ պետական լիազոր մարմնի կողմից կարող են տրվել նորոգման կամ վերակառուցման լուծումների վերաբերյալ հանձնարարականներ, որոնք ներառվում են Բալախովիտի համայնքապետարանի կողմից տրվող ձևավորման նախագծում կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքում:

12. Բալախովիտի համայնքապետարանի համապատասխան մասնագետի կողմից Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ շենքի ճակատների, օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների վերականգնման կամ նորոգման աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

13. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) խանութների, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով և շահագործվեն սահմանված պահանջներին համապատասխան:

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները:

ա.ապահովված լինի տեսանելի մաքրությունը (փոշուց, աղբից, տերևներից և այլն) և անհրաժեշտ թվաքանակով աղբարկղերի առկայությունը, ընդ որում՝ մաքրման աշխատանքները պետք է կատարվեն առավոտյան ժամը 08:00-ից մինչև 09:00-ն և երեկոյան ժամը 18:00-ից մինչև 19:00-ն:

բ.ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը՝ տեղումները դադարելուց 4 ժամ հետո կամ մինչև առավոտյան ժամը 11:00-ն, եթե ձյունը դադարել է նախորդ երեկո ժամը 21:00-ին և դրանից հետո:

գ.ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտբետոնե ծածկերը և (կամ) սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից:

դ.ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել ճանապարհի երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում, կամ ճամփեզրին:

ե.ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձնից և սառույցից:

14.Բալահովիտ համայնքի սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

15.Կանաչապատման աշխատանքները ենթակա են պարտադիր կատարման միայն Բալահովիտի համայնքապետարանի աշխատակազմի կողմից տրամադրված ֆիտոնախագծի համաձայն:

16.Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխությունը համաձայնեցնում է Բալահովիտի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության ոլորտը համակարգող մասնագետի հետ:

17.Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

18.Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա դրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

19.Այն դեպքում, երբ հատկացված հողամասի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքները, ինչպես նաև շենքի, շինության կամ դրանց տարածքի սեփականության կամ օգտագործման կամ այլ գույքային իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման, ապա պարտադիր բարեկարգման և մաքրման է ենթակա այն տարածքը, որը փաստացի տիրապետվում է անշարժ գույքի տիրապետողի կողմից:

20.Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, բնակչության կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ինչպես նաև առևտրի այլ օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

2) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցրած պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

3) առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից 10-50 մետր (կախված օբյեկտի տարողականությունից և հզորությունից),

5) արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 50 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

6) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 10 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

7) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված տարածքի պարագծից 50-100 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը:

21. Սույն կարգով նախատեսված դրույթների խախտումն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվություն:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲԱԼԱՀՈՎԻԹՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
12 ՄԱՐՏԻ 2018թվականի N 15-Ա

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԶՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի և, մասնավորապես, Բալահովիտ համայնքի տարածքում աղբահանության հետագա աշխատանքների բարելավմանն ուղղված Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի միջև 05.04.2016 թվականին կնքված վարկային համաձայնագրից (հետագա տեքստում՝ «Վարկային համաձայնագիր») բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավունքների իրականացման ու պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով, համայնքի ավագանին որոշում է

1. Պարտավորություն ստանձնել 2020 թվականից մինչև 2030 թվականն ընկած ժամանակատվածում հավասարաչափ մասնաբաժիններով Վարկային համաձայնագրից բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտավորությունների կատարմանն ուղղված՝ ենթավարկի հիմնական գումարները, հաշվարկված տոկոսագումարները, հանձնավճարները, վերաձևակերպման վճարումները, այդ թվում Հայաստանի Հանրապետության կողմից 2018-2019 թվականների ընթացքում Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին վճարված գումարների վճարման առումով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌՈՒԴԻԿ 

4. ՄԱՐՏԻՐՈՅԱՆ ԱՇՈՏ 

5. ՄՀՈՅԱՆ ՄԱԶԻԹ 

6. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ 

7. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ 

